

քունց»-ին: Տողատակի ծանոթագրությունում «մեծաց եւ փոքուց»-ի համար որպես այլընտրանքային ընկալման հնարավոր տարբերակ է առաջարկվել «ազնվականներ և քաղաքացիներ» բացատրությունը (per grandi e piccoli intendiamo i nobili e i cittadini)⁵: Ցարդ հարցի նման մեկնաբանությունը խորենացիագիտության մեջ ունեցել է միայն մեկ հետևորդ: Անդրադառնալով 1889 թ. հ. Խորեն վրդ. Ստեփաննի կողմից հրատարակված Խորենացու «Հայոց պատմության» աշխարհաբար թարգմանությանը՝ Մկրտիչ Պալյանը իր «Խորենացու պատմության» աշխարհաբար թարգմանությունը եւ բնագրին ուսումնասիրությունը՝ ձեռագիր աշխատության մեջ այն կարծիքն է հայտնել, որ «Հայոց մեծաց եւ փոքունց» ձևակերպումը Խորենացին չէր կարող գործածել Մեծ և Փոքր Հայք նշանակությամբ, քանի որ վերջիններս այնտեղ դարձրելու բառեր ու բաժանումներն են, եւ Խորենացին իր պատմության մեջ երբեք չէ գործածած այս բառերն, այլ ասած է՝ Առաջին, Երկրորդ, Երրորդ, Չորրորդ Հայք»⁶: Ըստ Մ. Պալյանի՝ Պատմահոր վերոհիշյալ հատվածը պետք է հասկանալ իբրև «տոհմիկ եւ անտոհմիկ Հայոց»⁷: Սակայն «Հայոց մեծաց եւ փոքունց» արտահայտությունը աշխարհագրական բովանդակությունից ղուրկ նկատելու այս փորձը, բավարար փաստարկված չլինելով, քննադատվեց⁸ և ընդունելության շարժանցավ պատմաբանասիրության ասպարեզում:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե Խորենացու կողմից Աղվանքի, Վիրքի, Մեծ և Փոքր Հայքերի հիշատակությունը մ.թ.ա. VI դարի վերաբերմամբ այն դեպքում, երբ թվարկյալ երկրները, որպես այդպիսիք, պատմության թատերաբեմում դեռևս չէին հայտնվել՝ պարզապես արդյունք է Տիգրան Բ Մեծի և Տիգրան Երվանդյանի գործունեության պատմաաշխարհագրական միջավայրերի շփոթի: Սակայն, ընդհանուր առմամբ, նման ընդունելի մեկնաբանության դեպքում նույնիսկ անհասկանալի է մնում Փոքր Հայքի հիշատակության պարագան, քանզի, քանիցս անդրադառնալով Եփրատից արևմուտք ընկած փոքրասիական տարածքներին⁹ և հիշատակելով Փոքր Հայքի սահմանակից Պոնտոսն ու Կապադովկիան, Խորենացին ոչ մի անգամ չի տալիս Փոքր Հայք անունը: Այս հանգամանքը կասկածելի է դարձնում անգրեփրատյան Հայքի հետ ուղղակիորեն շահնչվող դրվագում Խորենացու կողմից Փոքր Հայքի կարծեցյալ հիշատակությունը կամ ավելի ճիշտ՝ թարգմանիչների կողմից «Հայոց... փոքունց»-ը աշխարհագրական իմաստով ընկալելը: Ուշագրավ է, որ Մ. Խորենացու՝ մեզ հասած մի շարք ձեռագրերում

⁵ Storia di Mosè Corenese, Versione Italiana, illustrata dai monaci Armeni Mechitaristi, ritoccata quato allo stile da N. Tommaseo, Venezia, San Lazzaro, 1841, էջ 79, ծանոթ. 1 (սույն թարգմանությունը նույնությամբ վերահրատարակվել է 1850 թ.): Ավելորդ չենք համարում նշել, որ Խորենացու պատմագիրը իտալերեն թարգմանելու գործում է. Թոմազեոյին մեծապես օգնել է վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Գարրիել վրդ. Ավագովսկի:

⁶ Մ. Պալյանի այս աշխատությունը 1890 թվին ներկայացված է եղել Իդիբրլյան կտակի գործադիր հանձնաժողովին, սակայն, ի վերջո, բացասական գրախոսականի պատճառով տպագրության չի արժանացել: Հետևաբար, ձեռքի տակ չունենալով խնդրո առակա ուսումնասիրությունը՝ դրանից օգտվել ենք միջնորդավորված կերպով, տե՛ս Բ. Յ. Պ էր պ է ր ե ա ն, Բանագատություն (Հանդէս ամսօրեայ, 1892, № 12, էջ 361—362), Մ. Պ ալ ե ա ն, Պատասխան Բ. Յ. Պ էր պ էր ե ա նի քննության Մ. Խորենացու մասին (նույն տեղում, 1893, № 7, էջ 201—202):

⁷ Բ. Յ. Պ էր պ էր ե ա ն, նշվ. աշխ., էջ 362:

⁸ Նույն տեղում:

⁹ Մ. Խորենացի, գիրք 1, գլ. ԺԴ, գիրք 11, գլ. Դ, Զ, ԺԴ, ԾԴ, ԽԴ, գիրք 111, գլ. 2, 2Բ:

վերոբերյալ հատվածը շունի «եւ փոքունց» արտահայտությունը¹⁰։ Թվում է, թե սույն փաստը վերոշարադրյալի շրջագծում դիտելով՝ կարելի է «եւ փոքունց»-ը հետսամուտ հավելում նկատել և դրանով իսկ՝ փակված համարել քննարկվող հարցը։ Սակայն բանն այն է, որ նման մի ընդմիջարկություն ենթադրելու դեպքում եւ «Հայոց փոքունց»-ը Փոքր Հայք թարգմանելու համար անխուսափելիորեն հարկ կլինի ցույց տալ, որ միջնադարյան գրիչի ընկալումը նույնպես այդպիսին է եղել։ Կարծում ենք, որևէ սովորական արտագրողի նման մի հավելում վերագրելու ցանկացած փորձ ի սկզբանե անհաջողության է դատապարտված, քանզի՝ 1. մ. թ. IV դ. վերջից արդեն Փոքր Հայքը, որպես քաղաքական կամ ռազմավարական միավոր, դադարել էր գոյություն ունենալուց և անցել էր պատմաաշխարհագրական հասկացությունների գիրկը։ 2. Խորենացին իր Պատմագրքում անդրեփրատյան հայկական հողերի վերաբերմամբ Փոքր Հայք անվանումը չի գործածում։ 3. Հայ մատենագիրները Փոքր Հայքի մասին, բացի մեկ-երկու սոսկական հիշատակությունից, ոչինչ չեն հաղորդում։ 4. պատմագիտությանը հայտնի սկզբնաղբյուրներից և ոչ մեկը Տիգրան Երվանդյանի ժամանակներում Փոքր Հայքի մասին ոչինչ չի հայտնում։ Այս հաստատումները ինքնըստինքյան խոսում են այն մասին, որ Խորենացու «Պատմութեան» ընդօրինակողներից որևէ մեկը հազիվ թե ենթադրվող առումով նման մի կարևոր լրացում կատարեր։ Ինչևէ, այս ուղղությամբ ծավալվելու դեպքում խնդրի ընդունելի հանգուցալուծման հնարավոր չէ հասնել։ Փոխարենը, քննվող հարցի պարզաբանման գործում կարևոր դերակատարություն կարող է ստանձնել Տիգրան Հայկազնին վերաբերող Թովմա Արծրունու մի հաղորդումը։ Խոսելով հայ-մարական հակամարտության մասին՝ Արծրունյաց տան պատմիչը գրում է. «Ազդ եղև մեծին Տիգրանայ պատրաստ պնդութիւն Աշղահակայ. եւ ժողովեալ ազգք ազգք յընտրելոց զօրաւորաց արանց քաջամարտկաց, զզօրս Կապուղկացոց, զՎրաց եւ զԱղուանից եւ զԱյրարատեան գազանամարտիկ զանճոռնի զօրսն եւ զբոլոր բովանդակեալ գունդս զօրացն եւ զորդիսն Սենեքերիմայ...»¹¹։ Դժվար չէ նկատել, որ որոշ տարբերություններ ունենալով հանդերձ՝ Թովմայի վկայաբերված հաղորդումը մեծապես աղերսվում է Խորենացու նույնաբովանդակ հատվածին։ Արծրունյաց տան պատմիչն ինքն էլ, նախքան Տիգրան Հայկազնի գործունեությանն անդրադառնալը, անորոշ կերպով ակնարկում է օգտագործած աղբյուրների մասին. «որպէս ցուցանեն մեզ առաջինքն ի պատմագրացն»¹²։ Անկասկած, Թովման առաջին պատմագիրների թվում ամենից առաջ նկատի է ունեցել հենց Խորենացուն։ Այդ մասին է վկայում և այն, որ Տիգրան Երվանդյանի գործունեությանն առնչվող մի շարք այլ դրվագներում ևս երկու պատմիչների հաղորդումները անժխտելի նմանություններ են հանդես բերում։ Այդուհանդերձ, շնայած որոշ ընդհանրություններին՝ Տիգրան Հայկազնի մասին Մ. Խորենացու և Թ. Արծրունու պատմածները մի շարք դեպքերում էականորեն տարբերվում են միմյանցից, ինչը խոսում է այն մասին, որ Արծրունին Խորենացուց զատ նաև այլ աղբյուր(ներ) է ունեցել ձեռքի տակ։ Բայց այն, որ Թովման որոշ հատվածներում ուղղակիորեն կրկնել է Պատմահորը՝ վեր է ամեն մի կասկածից։ Արդ, վերադառնանք Մ. Խորենացու և Թ. Արծրունու երկերում պահպանված մեզ հետաքրքրող հատվածներին։ Թովման ևս, ինչպես Խորենացին, Մարաստան արշավող հայոց թագավորի զորաբանակի կազմում հիշատակում է Կապուղկիայի, Վիրքի և Աղվանքի զորքերի մասին, սակայն հակառակ սպասվածի՝ հայոց զորաբանակը

10 Տե՛ս Մ. Խորենացի, Երևան, 1991, էջ 81-ի տողատակում նշված համապատասխան տարբերությունը։

11 Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, բնագիրը հրատարակության պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Մ. Վարդանյանը, Երևան, 1985, դպր. Ա, դլ. Ե, էջ 62։

12 նույն տեղում։

կոչում է՝ «զԱյրարատեան գազանամարտիկ զանճոռնի զօրսն և զբոլոր բովանդակեալ գունդս զօրացն և զորդիսն Սենեքերիմայ»։ Վկայաբերված հատվածի համար Վ. Վարդանյանը առաջարկում է հետևյալ թարգմանությունը՝ «...Արարատյան գազանամարտիկ, անճոռնի զորքն իր բոլոր զորագնդերով և Սենեքերիմի որդիներին...»¹⁸, որը, սակայն, խիստ անհաջող պետք է նկատել։ Մասնավորեցնենք. 1. Գրաբարյան «անճոռնի» բառն ունեցել է «վիթխարի, հաղթանդամ, ստվար, ահավոր» իմաստը¹⁴ և ո՛չ երբեք աշխարհաբար հայերենի «անճոռնի, տգեղ» նշանակությունը։ 2. Թովմայի մոտ «զբոլոր բովանդակեալ գունդս զօրացն» արտահայտությունը «զԱյրարատեան գազանամարտիկ զանճոռնի զօրսն»-ին շաղկապված է «եւ»-ով, այնինչ՝ աշխարհաբար թարգմանության մեջ «իր» դերանունը գործածվելով «եւ» շաղկապի փոխարեն՝ բոլոր զորագնդերն ակամա դարձել են «գազանամարտիկ» և «անճոռնի»։ 3. Հայտնի է, որ հնում «գազան» բառն ունեցել է նաև «փիշ» նշանակությունը¹⁵։ Հստ այդմ, կարծում ենք, որ «անճոռնի» ածականը կրող «գազանամարտիկ»-ը հարկ է թարգմանել «փղամարտիկ», իսկ վերջինս տրվյալ դեպքում թերևս ավելի շուտ պետք է ընկալել «փղերով կովողներ» և ոչ թե «փղերի դեմ կովողներ» իմաստով։ Տիգրան Երվանդյանի օրոք հայկական բանակի կազմում փղամարտիկ զորքերի մասին Թ. Արծրունու տեղեկությունը խարսխված է արդյոք որևէ արժանահավատ աղբյուրի վրա թե՞ պարզապես պատմիչի երևակայության արդյունքն է՝ այս սլարագայում այնքան էլ կարևոր չէ։ 4. Բնագրի «Այրարատեան»-ի փոխարեն, իբրև նախնորների զուգաձև, առաջարկվում է «Արարատյան»-ը, թեպետ այս դեպքում ամենեին էլ հարկ չկա հրաժարվելու տեղանվան գրաբարյան ավանդաձևից։

Այսու, ելնելով վերոշարադրյալեց, Թ. Արծրունու երկի՝ խնդրո առարկա հատվածը, կարծում ենք, պետք է թարգմանել հետևյալ կերպ՝ «Այրարատյան փղամարտիկ ահարկու զորքը և բոլոր զորագնդերն ու Սենեքերիմի որդիներին...», Եթե Սենեքերիմի որդիների (Արծրունիների նախնիների) մասնակցությունը հատուկ ընդգծելու պարագան միանգամայն հասկանալի է, ապա նույնը չի կարելի ասել մնացյալի՝ մասնավորապես «զԱյրարատեան»-ի վերաբերյալ։ Ուշագրավ է, որ Թովման սույն դեպքից բացի ևս երեք անգամ տարբեր առիթներով այս տեղանունը հիշատակելիս՝ («զայսու կողմամբ Այրարատեան նահանգի»՝ դպր. Ա, գլ. 2, էջ 76, «ղաշխարհ տանուտերական իշխանութեանն միջեւ յԱյրարատ»՝ դպր. Բ, դլ. 9, էջ 136, «ընդդեմ նայելով լեռանցն Այրարատեան ազատն Մասեաց»՝ դպր. Գ, դլ. ԻԹ, էջ 392) ոչ մի անգամ դրա տակ չի հասկացել բովանդակ Հայաստանը կամ այլ կերպ ասած՝ հրեական ավանդույթից հայտնի Արարատի երկիրը¹⁶ կամ Արարատյան թագավորությունը¹⁷։ Այս առումով ինքնին խոսուն է այն փաստը, որ նույնիսկ Ասորեստանի թագավոր Սինախերիբի որդիների՝ Հայաստան գալու մասին խոսելիս, Արծրունյաց տան պատմիչը ձեռնպահ է մնացել Հայաստանին տրված աստվածաշնչյան անվանումը գործածելուց։ Ավելին՝ Տիգրան Հայկազնի գործունեությունը նկարագրելիս, առիթը ներկայանալու դեպքում՝ պատմիչը դիմել է «յաշխարհս Հայոց», «Հայոց թագաւոր», «ի Հայս», «զօրացն Հայոց» ձևակերպումներին¹⁸։ Այսուհանդերձ, դատելով Թովմայի՝ խնդրո առարկա հաղորդման ընդհանուր կառուցվածքից, հակված են կարծելու, որ «Այրարատեան»-ը տվյալ դրվագում համազոր է բովանդակ Հայաստանին։

18 նույն տեղում, էջ 63։

14 Նոր բառերից Հայկական լեզուի, երկասիրութիւն երկից վարդապետաց՝ Հ. Գարրիէլի Աւետիբեան, Հ. Խաչատրոյ Սիրմէրօսս, Հ. Մկրտչի Աւգերեան, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 39։

15 նույն տեղում, էջ 520։

16 Գիրք Թագաւորաց Գ, դլ. ԺԹ, 37։

17 Մարգարէութիւն Երեմեաւ, գլ. ԵԱ, 27։

18 Թ. Արծրունի, դպր. Ա, դլ. Ե, էջ 62—63։

Աստվածաշնչյան թեմատիկայի շրջանակներից դուրս սա, ըստ էության, եզակի լինելու հավակնություն ունեցող փաստ է միջնադարյան հայ մատենագրության մեջ, որն առ այսօր, սակայն, մեկնարանության չի արժանացել: Ամեն դեպքում, ինչպիսի լուսաբանություն էլ որ ստանա այս հարցը, միևնույն է՝ հպարտ թե հնարավոր լինի պնդել, որ Արծրունյաց տան պատմիչը «Հայոց մեծաց եւ փոքունց»-ը ընկալել է հենց այն իմաստով, ինչպես որ մեկնում են Խորենացու աշխատությանն անդրադարձած նոր և նորագույն ժամանակների բանասեր-բնագրագետները: Արդ, ինչով բացատրել այն, որ Քերթոզհոր հիշատակած երկրների՝ Թ. Արծրունու բարեխիղճ թվարկումը անվանապես իր մեջ չի ներառում ոչ Մեծ և ոչ էլ Փոքր Հայքը: Հարցի քննության շահերից Լլնելով՝ դիմենք Եղիշեին և կրկին անգամ՝ Թովմային:

Եղիշե¹⁹

Թ. Արծրունի

1. «Սա էր իշխան եւ հրամանատար ամենայն տէրութեանն Պարսից, որում անուն էր Միհրնբրսեհ, եւ շէր ոք ամենեւին, որ իշխէր, ըստ ձեռն նորա կլանելու, եւ ոչ միայն մեծամեծք եւ փոքունք, այլ եւ ինքն թագաւորն հրամանի նորա անսայր...» (գլ. 3, էջ 178),
 2. «...բայց յորժամ ձերով կամօք եւ յօժարութեամբ առաջնորդ եւ զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ եւ բաղձալի թուեսցին բանք իմ ի լսելիս մեծամեծաց եւ փոքունց» (գլ. 5, էջ 204):

1. «Եւ հարան զօրքն Գաղատացւոց ի մեծամեծաց միեչել ի փոքունս նոցա եւ ոչ մնաց ի նոցանէ եւ ոչ մի» (դպր. Ա, գլ. Ե, էջ 66):
 2. «Եւ թագաւորեաց կայսր Թէոդոս փոխանակ Պապայ զվարազատումն յԱրշակունի տոհմէ, այր քաջ և պատերազմող, ահարկու մեծամեծաց եւ փոքունց» (դպր. Ա, գլ. ԺԱ, էջ 108):

Դատելով բերված հատվածներից՝ դժվար չէ կռահել, որ «մեծամեծք»-ի հետ զուգահեռաբար գործածված գրաբարյան «փոքր»-ը (հոգ. ուղղ.՝ «փոքունք») ձեռք է բերել սոցիալ-իրավական որոշակի կարգավիճակ ունեցող հասարակական շերտի իմաստ: Մեր կարծիքով, Խորենացու «Հայոց մեծաց եւ փոքունց»-ի պարագայում ևս գործ ունենք «փոքունք»-ի հենց նույն իմաստային կիրառման հետ: Եթե նույնիսկ ընդունելու լինենք, որ «Հայոց մեծաց» ձևակերպումը Խորենացու գրչին է պատկանում և աղճատման հետևանք չէ՝ փոխանակ «Հայոց մեծամեծաց» սկզբնաձևի, միևնույն է՝ «մեծաց»-ը ամենևին էլ պարտադիր չէ դիտել որպես պատմաաշխարհագրական նույնանուն միավորները զանազանող մակդիր: Եվ առհասարակ, հայ մատենագիրների երկերում և մասնավորապես Խորենացու «Հայոց պատմության» մեջ հանդիպող «Հայոց մեծաց»-ները միշտ չէ, որ հնարավոր է թարգմանել «Մեծ Հայքի»²⁰: Այս առումով ուշագրավ է, որ Ղ. Ալիշանը, անդրադառնալով Մեծ և Փոքր Հայք անվանումների առաջացմանը, այն կարծիքն է հայտնել, որ դրանք «առ օտարս կը գործածուի ի խտրութիւն երկու մեծամեծ բաժնից աշխարհիս», իսկ «առ բնիկ նախնիս մեր ծանօթ չէ այսպիսի ինչ. այլ իբր պանծանաց եւ արութեան անուն կը գործածուի Մեծաց Հայոց կոչումն, որպէս Պարսիցն՝ Արեաց»: Այս խնդիրը, սակայն, առանձին և հանգամանալի մատուցման կարիք ունի²¹, և այդ իսկ պատճառով, ի հաստատումն վերը ասվածի, այստեղ սահմանափակվում ենք մի քանի ցայտուն օրինակների մատնանշումով միայն. 1. «Կատարեցան ցանկք առաջին գրոց ծննդաբանութեան

19 Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, բնագրի պատրաստումը, աշխարհարար թարգմ. և ծանոթագր. Ե. Տ. Բ. Միսասյանի, Երևան, 1989:

20 Տե՛ս Ռ. Յ. Պէրպէրեան, Եղվ. աշխ., էջ 362, Մ. Պալեան, Եղվ. աշխ., էջ 202, Մ. Խորենացի, Երևան, 1940, էջ 2—3, 56, 168—169, 252, 255, ծանոթ. 1:

21 Ղ. Ալիշան, Եղվ. աշխ., էջ 112:

Հայոց մեծաց» (Խոր. էջ 4): 2. «Մենդաբանութիւն Հայոց մեծաց» (Խոր. էջ 5)- 3. «Կատարեցան գիրք առաջին ծննդաբանութեան Հայոց մեծաց» (Խոր. էջ 88)²²: 4. «Իսկ ի տոհմէ ամենայն Հայոց մեծաց, զՎաղարշ, որ էր իշխան Անձտայ...»²³:

Եթե «մեծք»-ի («մեծամեծք») թարգմանության հարցը ընդհանուր առմամբ տարակարծության տեղիք չի կարող տալ, ապա նույնը չի կարելի ասել «փոքունք»-ի վերաբերյալ: Վերջինիս համար Ծ. Տեր-Մինասյանը և Վ. Վարդանյանը ուղղակիորեն առաջարկում են «փոքրեր» թարգմանությունը²⁴, որը, սակայն, մեղ հետաքրքրող դեպքերում ակնհայտորեն չի պատշաճում գրաբարյան «փոքունք»-ին: Անընդունելի պետք է նկատել նաև Մ. Պալյանի կողմից առաջարկվող «անտոհմիկներ» բացատրությունը, քանզի հազիվ թե Խորենացին անտոհմիկներին արժանացնեք «զամենայն ընտիրս Հայոց» բնորոշմանը: Դատելով ըստ ամենայնի՝ «փոքունք»-ը հին հայերենում ունեցել է «մանր ազնվականներ, ազատներ» իմաստը:

Այսպիսով, ի մի բերելով ողջ ասվածը, իբրև եզրակացություն կարող ենք արձանագրել. ա. «Հայոց մեծաց եւ փոքունց»-ի պարագայում Խորենացին բնավ էլ նկատի չի ունեցել Մեծ և Փոքր Հայքերը: Հետևաբար, մ.թ.ա. IV դ. ավելի վաղ ժամանակների վերաբերմամբ Փոքր Հայքի գոյություն մասին «հավաստող» միակ հաղորդումը հիմնադրուկ պիտի նկատել, բ. Մ. Խորենացու «զամենայն ընտիրս Հայոց մեծաց եւ փոքունց»-ը պետք է թարգմանել հետևյալ կերպ՝ «Հայոց մեծատոհմիկների եւ ազատների բոլոր ընտիրները»²⁵, ըստ այդմ՝ ինքնին հասկանալի է դառնում Մարաստանի դեմ ձեռնարկված արշավանքի կապակցությամբ Թ. Արծրունու կողմից Մեծ և Փոքր Հայքերը չհիշատակելու պատճառը:

К ИНТЕРПРЕТАЦИИ ОДНОГО СООБЩЕНИЯ МОВСЕСА ХОРЕНАЦИ

А. Х. АМБАРЦУМЯН

Р е з ю м е

Повествуя о походе армянского царя Тиграна Ервандяпа в Мидию, Мовсес Хоренаци в составе его войск упоминает отборные воинские части Каппадокии, Ибернии (Վիրք), Алуанка (Աղուանք), а также «զամենայն ընտիրս Հայոց մեծաց եւ փոքունց», что обычно текстологами-филологами переводится как: «Все избранные Великой и Малой Армении». Однако тщательное и всестороннее рассмотрение вопроса показывает, что Отец армянской историографии под фразой «Հայոց մեծաց եւ փոքունց» подразумевал не Великую и Малую Армению, а просто имел в виду высокородных и мелких дворян.

²² էջերը տրված են ըստ Մ. Խորենացու «Հայոց պատմության» բնագրի՝ 1991 թվականի արևելյան քննական հրատարակության:

²³ Փ ա վ ս տ ո ս Բ ու ղ ա ն ղ, Հայոց պատմություն, բնագիրը՝ Բ. Պատկանյանի, թարգմ. և ծանոթագր.՝ Ստ. Մ ա լ խ ա տ ս յ ա ն ի, Երևան, 1987, գպր. 111, գլ. ԺԲ, էջ 48:

²⁴ Տե՛ս Ե ղ ի շ Ե, գլ. 3, էջ 179, գլ. 5, էջ 205 և Թ. Արծրունի, գպր. Ա, գլ. Ե, էջ 67, գպր. Ա, գլ. ԺԱ, էջ 109:

²⁵ «Հայոց մեծաց եւ փոքունց»-ի համար կարելի է առաջարկել նաև թարգմանության այլ տարրերակներ, ասենք՝ 1. «Հայոց մեծատոհմիկների և մանր ազնվականների», 2. «Հայոց ավագանու և ազատանու», 3. «Հայոց ավագանու և կրտսեր ազնվականների», 4. «Հայոց խոշոր և մանր ազնվականների» և այլն: